ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի նախագահ)

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՋԱՆՔԵՐ

Մովսես Գ Տաթևացի, Փիլիպպոս Ա Աղբակեցի, Հակոբ Ջուղայեցի և Եղիազար Այնթապցի կաթողիկոսները գնահատելի ջանքեր են գործադրել լուսավորչաշեն այս հինավուրց կաթողիկեի վերականգնման, ամրացման, պահպանման և ներքին հարդարման ուղղությամբ: Սակայն ժամանակն իր ավերիչ դերն էր կատարել ու կարիք էր զգացվում նորից որոշ միջոցառումներով ապահովել տաճարի հետագա պահպանությունը:

Ահա թե ինչու ԺԹ դարի երկրորդ կեսից ս. Էջմիածնի Մայր տաճարի նորոգման հարցը առաջնահերթ դարձավ:

Տաճարի շենքի «խոցելի» տեղը միշտ էլ եղել է կտուրը: Փիլիպպոս կաթողիկոսի ժամանակ, 1633 թ., քարերով սալահատակված կտուրն արդեն վնասվել էր այն աստիճան, որ ծածկերի ու պատերի մեջ կըտուրից թափանցող խոնավության վնասազերծումը դարձել էր անհետաձգելի հարց: Կտուրի սալարկվածքն է՛լ ավելի վնասվել էր 1804 թ. ռուս-պարսկական պատերազմների ժամանակ, երբ, ինչպես նշում է ճարտարապետ Թորոս Թորամանյանը, «Էջմիածնի Մայր տաճարը ամրոցի էր վերածված ու ... ռուս զինվորները գիշեր-ցերեկ մնալով տանիքներուն վրա, միշտ կրակ վառեր են այնտեղ, որ քարերուն այրվելուն ու փչանալուն պատճառ եղեր են»[1]: Անձրևների ժամանակ էլ ջուրը տաճարի ներսն էր թափանցում, ուստի Եփրեմ Ջորագեղցի կաթողիկոսը Մայր տաճարի տանիքը քանդել ու նորոգել է տալիս[2]:

Խոնավության քայքայիչ գործունեությունն աչքի էր ընկնում նաև տաճարի ստորին մասերում՝ հիմնախարիսխներում, որոնք ամբողջ պարագծով խարխլվել էին:

Ինչպես տանիքի, այնպես էլ հիմնախարիսխների վերանորոգումը զգալի ծախսեր էր պահանջում: Ուստի Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի նախաձեռ-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1976 թվականի № Ե-ից:

[1] **Թ. Թորամանյան**, Նյութեր, հտ. 1, էջ 229:

[2] **Աբել արքեպ. Մխիթարեանց**, հիշ. աշխ., էջ 32:

նությամբ, 1866 թ. սկսած, կազմակերպվում է հանգանակություն՝ ի նպաստ Մայր տաճարի վերականգնման: Քսան տարի անց արդեն գոյացել էր շուրջ 15,5 հազար ռուբլի գումար[3]: Վերանորոգման նախագծումն ու շինարարական աշխատանքների ղեկավարությունը հանձնարարվում է ճարտարապետ Միքայել Սալամբեկյանին, որը գործի է անցնում 1888 թ. ապրիլի 6-ին, ս. Աստվածածնի Ավետման տոնի նախընթաց օրը: Նույն օրը տեղի է ունենում նաև Մայր Աթոռի նոր տպարանի շենքի հիմնարկեքը[4]:

Այնուհետև «Արարատ» ամսագրում հանդիպում ենք համառոտ հաղորդումներ Մայր տաճարի վերականգնման աշխատանքների ընթացքի մասին. «Մայր Աթոռումս կատարուած շինութեանց և վերանորոգութեանց գործը բաւական արագ յառաջ է ընթանում... Մայր տաճարի եռաստիճան խարխուլ պատուարը (իմա՝ հիմնախարիսխը—Վ. Հ.) քանդուած է և նոր պատուարը սաժենաչափ բարձրութեամբ կիսով չափ շինուած: Տաճարի շուրջը, Վանքի ընդարձակ բակը, որ եկեղեցու հատակից բարձր էր արշինաչափ, ցածրացուած է 1—1½ արշին և բոլոր հողը, որ լիցք էր, դուրս է կրուած մեծ պարսպից դեպի անտառի գլուխը»[5]:

Ընդգծելով կատարված վերականգնման աշխատանքների բարերար նշանակությունը Մայր տաճարի համար, հետագա հաղորդումներից մեկում ասված է. «Մայր տաճարի ներսի յատակը, որ երեք աստիճանով ցածր էր արտաքուստ շրջապատող պարսպամիջի հրապարակի մակերևոյթից, ընդ որում յիշեալ պարսպամիջի հրապարակում ի վաղուց անտի հետզհետէ աւելացած ու բարձրացած վեց հարիւր ութսուն և հինգ ու կէս խորանարդ սաժեն հողի թանձրութիւնը փորելով պարսպից դուրս թափուեցաւ, որով Մայր տաճարը, որ առաջ հրապարակի ամենացածր տեղն էր բռնում, այժմ իւր արտաքին դիրքով յիշեալ հրապարակի ամենաբարձր կենտրոնավայրն է ներկայացնում»[6]:

Անդրադառնալով նույն աշխատանքներին, Մաղաքիա արքեպ. Օրմանյանը հայտնում է, որ հողահանության հետևանքով Մայր տաճարի հատակը մեկ աստիճանով բարձր եղավ բակից: Տաճարի առջև հողի տակից բացվեցին գերեզմաններ, որոնք զգուշությամբ կարգավորվեցին: Խոսելով կատարված հողային աշխատանքի քանակի մասին, նա հայտնում է, որ բակի տասը հազար քառակուսի մետր տարածությունն ընդհանուր առմամբ ցածրացվել է մեկ կանգունաչափ[7]:

Տաճարի նախնական ձևերն անաղարտ պահպանելու հարցը քննարկման առարկա է դառնում ինչպես մասնագետների, այնպես էլ հոգևորականների շրջանում: Նույն տարվա մի այլ հաղորդման մեջ կարդում ենք. «Արդէն երկու տարի է, որ ս. Էջմիածնայ տաճարի վերանորոգութեան խնդիրը զարթնած է, շատ խոսուեցաւ դորա մասին, շատ առաջարկներ եղան: Մի քանի ճարտարապետներ իրենց կարծիքները տուին: Ոմանք լաւ համարեցին հիմնաւորապէս նորոգել եկեղեցին: Ամէն կարծիքները լսելուց յետոյ Նորին Սուրբ Օծութիւն Վեհափառ Հայրապետն Ամենայն Հայոց (Մակար Ա Թեղուտեցի կաթողիկոսը—Վ. Հ.) **որոշեց սրբութեամբ պահպանել եկեղեցու հնութիւնն և միայն նորա պահպանութեան համար կարևոր վերանորոգութիւնքն անել, ազատել նրան ապագայում խոնաւութեան ազդեցութիւնից և ժամանակի ժանիքի վնասները ապաքինել և այլ կարևոր միջոցները գործ դնել, որով տաճարի գոյութիւնը մշտապէս ապահովուած կլինի»** (ընդգծումը մերն է—Վ. Հ.): «Տաճարի ապահովութեան և անխախտ պահպանութեան համար մասնագէտների միջոցով անելիքն իմանալուց յետոյ Վեհափառ Հայրապետը հրամայեց մրճի առաջին հարուածը տալ...»[8]:

Վերանորոգման այդ միանգամայն ճիշտ սկզբունքն ընդունելիս իրավացիորեն ելնում էին տաճարի պատմա-ճարտարապետական և կրոնա-ազգային բացառիկ կարևոր նշանակությունից[9]:

Մասնագիտորեն գնահատելով ընդունված գիտական սկզբունքները և քննելով կատարված աշխատանքները, ցավոք սրտի նշենք, որ առաջինները հետևողականորեն չպահպանվեցին, առանձին դեպքերում թույլ տրվեցին ընդունված ճիշտ սկզբունքների խախտումներ:

Խախտումներից մեկը թույլ է տրվել գետնախարիսխների վերանորոգման ժամանակ: Միանգամայն հավանություն տալով հողահանման միջոցով մայրավանքի բակի մակարդակի իջեցմանը (որի շնորհիվ պիտի պակասեր ստորգետնյա ջրերի քայ-

[3] «Արարատ», 1888, էջ 320—321:
[4] Նույնը, էջ 253:
[5] Նույնը, էջ 320:
[6] Նույնը, 1889, էջ 231:
[7] **Մաղաքիա արքեպ. Օրմանեան**, հիշ. աշխ., էջ 4634:
[8] «Արարատ», 1889, էջ 283—284:
[9] Նույնը, էջ 284:

քայիչ ազդեցությունը Մայր տաճարի և մյուս շենքերի հիմքերի վրա), դրական կարծիք չի կարելի հայտնել սակայն (ոչ թե տեխնիկական, այլ ճարտարապետական առումով) գետնախարիսխների արմատական ձևափոխման մասին:

Այդ մասին կարդում ենք հետևյալ հիմնավորումը. «Տաճարի ստորոտը շրջապատող քայքայուած ու մաշուած եռակարգ աստիճանները, որոնց ճեղքուածներից ջրի մեծ քանակութիւն է ներս՝ դէպի հիմքերը ծծուում, բոլորովին վերցուեցան և նոյնատեղ շինուեցան մէկ սաժեն բարձրութեամբ նեղ ու զառիվայր մակերևոյթով երկկարգ աստիճաններ (պահպանվել են մինչև մեր օրերը—Վ. Հ.), գոտու պէս տաճարի ստորոտը ամրապինդ գրկած՝ թէ հաստատուն են պահպանում նոցա հիմքը և թէ նոցա նեղ ու թեք մակերևոյթի վերայ անձրև ու ձիւն մնալ չկարողանալու պատճառաւ տաճարի հիմքն ու պատերը ազատ են մընում խոնաւութիւնից»[10]:

Ճարտարապետ Մ. Սալամբեկյանը (որի նախագծով, ենթադրում ենք, կատարվել է հիմնախարիսխի վերանորոգումը) ձգտելով ճիշտ նպատակի՝ պահպանել հիմքերը խոնավության բացասական ազդեցությունից ու տեխնիկապես լուծելով այդ խնդիրը, նույնչափ հոգատար չի գտնվել հիմնախարիսխների նախնական ճարտարապետական ձևերի պահպանման նկատմամբ, աղավաղել է վաղ քրիստոնեական շրջանին բնորոշ նրա աստիճանաձևությունը: Այդ պատճառով էլ նոր հիմնախարիսխները անհարիր են ստացվել տաճարի հին ձևերին:

Նման կարգի խախտումների հանդիպում ենք նաև այլ առիթներով:

Նույն հաղորդման մեջ, որ տրվել է 1889 թ. ապրիլի 6-ին, այսինքն Մայր տաճարի վերանորոգման աշխատանքներն սկսվելուց ուղիղ մեկ տարի անց, խոսվում է Մայր տաճարի շրջապատի սալարկման մասին: Նախորդից ավելի ընդարձակ տարածությամբ սալարկումը կատարվում է զանգակատան մեջ, նրա աջ և ձախ կողմերում և առաջնամասում (արևմտյան կողմից) գտնվող հարթությունների վրա. փոխվում են զանգակատան այուների միջի հնացած ու մաշված քարերը: Տաճարի հյուսիսային կողմում, 2 սաժեն տարածությամբ, գետինը սալահատակվում է՝ այս կողմում առաջվա պես ստեղծելով (ս. Ստեփաննոսի անունը կրող սեղանի հետևում) բոլորաձև մի հրապարակ: Սալահատակում (3 սաժեն լայնությամբ և 144 արշին երկարությամբ) կատարվում է նաև տաճարի արևմտյան կողմում՝ Վեհարանի առաջնամասում: Նույն կարգի աշխատանքներ (2 սաժեն լայնությամբ և 149 արշին երկարությամբ) կատարվում են նաև հյուսիսային մասում գտնվող միաբանական սենյակների առաջ: Այնուհետև նորոգվում և քարապատվում է վանքի բակի շուրջը 180 սաժեն երկարությամբ պտտվող առվակը: Միևնույն ժամանակ սալահատակվում են Մայր տաճարից դեպի միաբանների սենյակները, Վեհարան ու ճեմարան տանող ճանապարհները[11]:

Վերը հիշատակված և բավականաչափ մեծ ծավալ ունեցող բարեկարգման աշխատանքներն ավարտվեցին Տրդատադուռ կոչված ավանդական դարպասի և Վեհարանի ներսը տանող դարպասի, Մայր Աթոռի հյուրանոցի մուտքի առաջ եռակարգ աստիճանների շինարարությամբ ու վանքի բակում, Մայր տաճարի չորս կողմերում գտնվող շինությունների առաջ կանոնավոր ուղղությամբ երկշար ծառուղիներ ստեղծելով (անտառային նորատունկ ծառերով ու վարդենիներով): Կարգավորվում է նաև միաբանական սենյակների ջրամատակարարումը. երկաթյա խողովակներով ջրատար մի նոր գիծ է գցվում «Քանքան» կոչված քահրեզային աղբյուրից[12]: Բարեկարգման հիշյալ աշխատանքները, որոնք կատարվում էին բացառիկ կազմակերպվածությամբ, ավարտվեցին 1889 թ. ամռանը:

Որոշ աշխատանքներ են կատարվում նաև Մայր տաճարի բարեկարգման ուղղությամբ: 1889 թ. ինժ. Նիկոլայ Գրիգորյանի նախագծով (այդ մասին ֆրանսերեն մակագրություն կա արևմտյան դռան ձախակողմյան փեղկի վրա) փոխվում են Մայր տաճարի արևմտյան, հարավային և հյուսիսային դռները: Արևմտյան դռան մյուս փեղկի վրա պահպանված ռուսերեն մակագրությունից պարզվում է, որ դռները պատրաստված են Ֆրանկե եղբայրների Թիֆլիսում գործող արհեստանոցում: Կաղնու փայտից պատրաստված և արտաքին երեսները նրբորեն ու հայառոճ զարդաքանդակված այդ գեղեցիկ ու ամրակուռ դռների պատրաստման ծախքերը (ինչպես վկայում են դրանց վրա եղած մակագրությունները) հոգացել են տարբեր բարերարներ: Հյուսիսային դռան վրա փորագրված է. «Ցիշատակ Գէորգ քահ. Գալստեան Տփխիսայ»՝ թվականը նշանակված է 1889, իսկ արևմտյան դռան վրա՝ «Ցիշա-

[10] «Արարատ», 1889, էջ 234—235:

[11] Նույնը:

[12] Նույնը, էջ 235—236:

տակ աւագ սարկաւագուհի Աղեք. Թահիրեանց»:

Գևորգ Դ կաթողիկոսի գահակալության տարիներին է տեղի ունեցել Մայր տաճարի արևելյան կողմում թանգարանային շենքի կցակառուցումը, որը կատարվել է 1867 թ., դեպի Ռուսաստան նրա կատարած ճանապարհորդության ժամանակ, ազգի առաջավորների ու եկեղեցական տեսչության քաջալերություններն ստանալուց հետո[13]: Վերադառնալով մայրավանք, հաջորդ տարի, 1868 թ., կաթողիկոսը նախաձեռնում է թանգարանային շենքի շինարարությունը, որի անհրաժեշտությունը թելադրված էր Ավագ սեղանի երկու կողմերում գտնվող ավանդատների խիստ փոքր չափերով, որոնցում հնարավոր չէր տեղավորել եկեղեցական սպասքն ու թանգարանային արժեք ներկայացնող իրերը:

Գևորգ Դ կաթողիկոսն իր մի նամակում, որը գրված է 1871 թ. հունվարի 22-ին և ուղղված Ատրպատականի հայոց առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոս Հոբյանցին, նախ տեղեկացնում է իր վերաշինական աշխատանքների մասին՝ հայտնելով, որ «զբաղեալ եմք և ի շինութեամբ պահարանաց տաճարին Աթոռոյս և հոյակապ ուսումնարանի և այլոց բազմաց նորոգութեանց, և ունիմք այլևս շինել, որ ինչ հարկաւոր դատեսցի, եթէ յաջողեսցէ տէր», ապա վերջում, կցելով քարի չափերը, խնդրում է «կճեայ» (մարմար) քարեր ուղարկել, քանզի «դրունք խորանաց հնոց որ 'ի մէջ տաճարին կարի իմն գալով և անշուք կամիմք մեծացուցանել և զբեմս և գեղեցիկ դրուագօք զարդարեալ առնել 'ի կճաքարանց, այլ քանզի չիք աստ քարինք կճեայք և գտանին 'ի Պարսկաստան, 'ի վիճակի Ջերում ի կողմանս Սալմաստու»[14]:

Մայր տաճարում կատարվելիք շինարարական աշխատանքների ծրագրում առաջնահերթը արևելյան կողմի խորանների կամ թանգարանային մասի հավելումն էր: Տարիներ հետո, հիմնավորելով թանգարանային մասի հավելման անհրաժեշտությունը, Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսիսյանի կարծիքով ամբողջ 16 դար գոյություն ունեցող սրբավայրը թեև բազմաթիվ և հաճախակի հափշտակություններից և կողոպտումներից չափազանց քիչ բան է կարողացել պահպանել, բայց այնուամենայնիվ, պահպանվածներն էլ անկարելի է տեղավորել երկու փոքր խորանների մեջ[15]:

Հայտնի չէ, թե ում (գուցե նույն Մ. Սալամբեկյանի) նախագծով իրականացված այս շենքը նպատակ ուներ զգալի չափով ընդարձակելու Մայր տաճարի թանգարանային մասը. հետևապես, միանգամայն համապատասխանում էր դրված խնդրին: Կառուցված շենքը հյուսիսից հարավ ընդգրկում է Մայր տաճարի ողջ լայնքն ու տաճարից փոքր-ինչ պակաս բարձրություն ունի: Այն արևելքից արևմուտք ուղղված երկու զուգահեռ պատերով ներսից բաժանվում է 3 մասի: Թանգարանի շենքի կառուցման մասին արևելյան պատի կենտրոնում օնիքսե սալի վրա փորագրված է հետևյալ արձանագրությունը.

«Ողորմութբ ԱՅ (Աստուծոյ)
Ազգասէր կաթողիկոսն ամենայն
Հայոց Գէորգ Դ Կոստանդնու-
պոլսեցի կառոյց զերիս պահարա
նս զայսոսիկ բազում ջանիւք
և զարդարեալ պայծառացոյց
զՄայր տաճարս սբյ Էջմիածնի
նպաստիւք բարեպաշտ ժողո-
վրդեան Հայոց Ռուսաստանեայց
յԵրրորդում ամի Հայրապետու
թեան իւրում
Ի թուականու Ե Փրկչի 1869
և Հայոց ՌՅԺԸ»:

Թեև թանգարանային մասը կամ Մասանց խորանը (ինչպես Մեսրոպ վարդապետը ճիշտ է համարում անվանել այս հավելվածքը) միանգամայն հարմար էր իր նպատակին, սակայն ժամանակակիցներից շատերը արդարացիորեն հաջող չհամարեցին այն, քանի որ կառույցը իտալական վերածնության իր ճարտարապետության ոճով անհարազատ էր Մայր տաճարի ճարտարապետական ոգուն: Ակներև էր, որ թույլ էր տրվել տաճարի վերանորոգության ընդունված ճիշտ սկզբունքի մի անթույլատրելի խախտում[16]: Այս հանգամանքն այնքան էր մտահոգում միաբանությանը և մասնագետներին, որ արդեն ԺԹ դարի վերջում առաջարկներ էին արվում նորակառույց մասը գոնե արտաքուստ վերակառուցելու մասին: Մեսրոպ վարդապետն առաջարկում էր այդ վերակառուցումը կատարել Մայր տաճարի հիմնական վերանորոգման ժամանակ «...միատեսակ ճարտարապետութեան վերածելով Գէորգ կաթողիկոսի շինած թանգարանը, որ իւր

[13] **Աբէլ արքեպ. Մխիթարեանց**, հիշ. աշխ., էջ 35:

[14] Հայկ. ՍՍՀ Պետական արխիվ, Դիվան հայ կաթողիկոսների, ֆ. 57, ց. 1, գործ 137, թ. 3:

[15] «Արարատ», 1903, էջ 411:

[16] **Մաղաքիա արքեպ. Օրմանեան**, հիշ. աշխ., էջ 4243:

ներկայ վիճակում չի համապատասխանում տաճարի ճարտարապետութեան ոճին»[17]:

Գիտնական վարդապետի այս կարծիքը հիմնավոր էր: Դրանով պետք է բացատրել, որ տարիներ հետո, երբ Մայր տաճարի վերանորոգման նախագծի մրցույթ պիտի հայտարարվեր, նրա պայմանների 6-րդ կետում առաջադրանք էր տրվում թանգարանի շենքը քանդելու և նորը կառուցելու մասին[18]: Այդպես էլ չիրականացած այս ճիշտ առաջարկից, ինչպես նաև Մայր տաճարի վերանորոգման մասին Մեսրոպ վարդապետի արտահայտած կարծիքներից երևում է, որ նա քաջատեղյակ էր հայ ճարտարապետության պատմությանը, դրան նվիրված եվրոպական գիտնականների աշխատություններին: Դրա համար էլ նա բանիմաց ու մեթոդական ճշմարիտ դիրքերից էր մոտենում Մայր տաճարի վերանորոգության հետ կապված հարցերին:

Մայր տաճարի անվթար պահպանման տեսակետից որքան էլ օգտակար էին հիմնախարիսխների վերանորոգումն ու բակի մակարդակի իջեցումը, այնուամենայնիվ կտուրի վերանորոգումը տակավին չէր իրականացված և մնում էր որպես օրակարգի անհետաձգելի հարց: Այս մասին հաղորդման ենք հանդիպում «Արարատ»-ի էջերում: Հաղորդումից տեղեկանում ենք, որ ավարտվել է Մայր տաճարի տանիքի վերանորոգումը՝ ապահովելով պատերը աշնանային և գարնանային անձրևների հետևանքով առաջացող խոնավությունից[19]:

Հիշատակված միջոցառումներին զուգահեռ նախապատրաստվում էր Մայր տաճարի հիմնական վերանորոգման գործը: Այդ նպատակով Մայր Աթոռը թիֆլիսաբնակ ճարտարապետ Շտերնին դեռևս 1890 թ. հանձնարարել էր մշակել նախագիծ, որը, դատելով Մեսրոպ վարդապետի հոդվածից, հավանության չի արժանացել:

Տարիներ հետո հիշյալ նախագծի մասին խիստ բացասական է արտահայտվել նաև նկարիչ Վարդգես Սուրենյանցը, որը քաջատեղյակ էր հայ արվեստի ու ճարտարապետության ավանդույթներին և ընդանց հետևողական պահպանության կողմնակից: «Ճարտարապետ Շտերնի պատրաստած մակարդակը,—գրում է Սուրենյանցը,—շատ բնորոշ նախագիծ էր մի օտարական ճարտարապետին հատուկ թերություններով, ճարտարապետ, որը հայկական ոճը (Սուրենյանցի կարծիքով Շտերնի կողմից այն մեկնաբանված էր որպես վրացականի և հայկականի խառնուրդ—Վ. Հ) իր սրտի մեջ բաժանել էր հավանած ու չհավանած տարերքին, առանց շրջանների ու դարերի խտրության: Հայտնի բան է,—շարունակում է նա,—եթե նորա (այսինքն Մայր տաճարի—Վ. Հ.) վերաշինությունը Շտերնի պես ճարտարապետի հոգացողությանը հանձնված լիներ, պիտի ամբողջ շենքը մի ընդհանուր ոճի բերվեր, բայց թե ի՞նչ ոճի, այդ օտար ճարտարապետի անհոգ ճաշակը պիտի որոշեր»[20]:

Ահա ինչու նոր նախագծի մշակումը շարունակում էր մնալ օրակարգում: Անհրաժեշտ էր համապատասխան մասնագետների միջոցով որոշել վերանորոգման մեթոդական սկզբունքները, այդ գործի շուրջը հրավիրել հասարակայնության ուշադրությունը և, իհարկե, հայթայթել պահանջվող դրամական միջոցներ: Ի պատասխան Մայր Աթոռի կոչի, Ալեքսանդր Մանթաշյանը երկու օրով (1903 թ. ապրիլի 16—18) Էջմիածին է ուղարկում իր փեսա Հովհ. Տիգրանյանին ճարտ. Աղեքսանդր Ռոտինյանի հետ միասին, պարզելու և քննելու համար տաճարի վերանորոգման համար անհրաժեշտ ծախսերի չափը:

Մայր տաճարի վերանորոգման յուրահատուկ նախապատրաստումը հանդիսացավ Մեսրոպ վարդապետի վերը հիշատակված «Էջմիածնի տաճարը» հոդվածը: Սկզբում նշելով Մայր տաճարի ազգային-կրոնական և պատմա-ճարտարապետական նշանակությունը, հեղինակն այնուհետև անդրադառնում է վերանորոգության մեթոդական խնդիրներին. «Ի՞նչ եղանակով, ի՞նչ ծրագրով պէտք է վերանորոգել տաճարը,—հարց է տալիս նա,—որ իւր ներկա կարկատուած, ճաքճաքուած և անհամաչափ շինուածքներով մի տեսակ կենդանի պատկեր է ներկայացնում հայի դժբախտ պատմութեան, այսօր աւելի է զգացւում շինութեան պատմութեան հետ ծանօթանալու, նրա մասին հաստատ գաղափար կազմելու մեծ կարիքը: Մասնաւոր կարկատան անողները ոչ կարող էին, ոչ էլ կամեցել են հաշուի առնել շատ էական խնդիրներ, որ այժմ, երբ հնարաւորութիւն կա ոչ թէ կարկատան, **այլ արմատական վերանորոգու-**

[17] **Մեսրոպ վարդապետ**, Էջմիածնի տաճարը, «Արարատ» 1903, էջ 415—16:

[18] «Արարատ», 1910, էջ 804—805:

[19] Նույնը, 1895, էջ 402:

[20] **Վարդգես Սուրենյանց**, Հաղագս վերանորոգության տաճարին սբ. Էջմիածնի, «Էջմիածին», 1947, հունվար-փետրվար, էջ 36—37:

[21] **Մեսրոպ վարդապետ**, Էջմիածնի տաճարը, «Արարատ», 1903, էջ 407—408:

թիւն կատարել (ընդգծումը մերն է—Վ. Հ.) զանց առնել կամ չենթարկել պատմական խնդիրները, մանրամասն, բազմակողմանի քննութեան, աններելի է»[21]:

Այնուհետև հոդվածագիրն առաջ է քաշում 4 հիմնական հարց, որոնք, իր կարծիքով, պետք է ելակետ հանդիսանային վերանորոգման նախագիծը մշակողների համար, ծառայեին որպես առաջադրանքի հիմք:

Նախ և առաջ վերանորոգողները պետք է նկատի ունենան, որ «...Էջմիածնի տաճարը հայերի հնագոյն և ամենագլխաւոր սրբավայրն է»[22]:

Երկրորդ կարևոր հարցը Մեսրոպ վարդապետը համարում է Մայր տաճարի հնագիտական և ճարտարապետական վիճակը և գտնում, որ շինությունն իր ներկա դրությամբ ամբողջական կերտվածք չի ներկայացնում, միայն անխախտ և հին են նրա հատակագիծը և պատերի զանգվածը, մի հանգամանք, որ ճարտարապետության մեջ մեծ նշանակություն ունի և որի հետ հաշվի պիտի նստի հիմնական վերանորոգություն ձեռնարկողը[23]:

Երրորդ կարևոր խնդիրը նա համարում է եկեղեցու շինության հարմարեցումը ծիսական նոր պահանջներին: Կրոնական արարողությունները եկեղեցում հետզհետե ենթարկվում են որոշ փոփոխությունների, որոնք, իրենց հերթին, թելադրում են փոփոխություններ մտցնել հավատացյալ բազմության համար որպես աղոթարան ծառայող եկեղեցում: Իր այդ միտքը հիմնավորելու համար նա օրինակ է բերում հայ ճարտարապետության պատմությունից:

«...Մեր հին եկեղեցիները,—գրում է նա,—չունէին ժամատներ կամ նախագաւիթներ, որ մտնում է իններորդ դարուց սկսած. զանգակատները շինուած են տասներկուերորդ դարուց, երբ արևմուտքի հետեւողութեամբ գործածական է դառնում զանգակների հնչիւնով ժամաւորներին աղօթքի հրաւիրելը և այլն»[24]:

Ելնելով սրանից, Մեսրոպ վարդապետը գտնում է, որ Մայր տաճարին ԾԷ դարում կցված զանգակատունը, որպես պատմական անհրաժեշտություն, կարող է պահպանվել: Կողմնակից լինելով հանդերձ Մայր տաճարին թանգարանային մասի հավելմանը, նա, ինչպես վերը նշվեց, աներդաշնակ է համարում կառուցվածքը Մայր տաճարի հնամենի ձևերին:

Չորրորդ կարևոր հարցը նա համարում է վերանորոգման հետ կապված կազմակերպական և նյութա-դրամական հարցը: Եթե վերջինս նա որոշ չափով ապահովված էր համարում, քանի որ հայտնի դրամատեր և բարեգործ Աղեքսանդր Մանթաշյանը խոստացել էր հատուկ նվիրատվություն կատարել, ապա վերանորոգման աշխատանքների նախագծումն ու իրականացումը պահանջում էր գտնել և ներգրավել համապատասխան մասնագետների: «Մնում է քննել,—գրում է նա,—թէ հայերի կամ օտարների մէջ կա՞ն արդեոք պատրաստուած և բանիմաց ճարտարապետներ, որ կարողանային վերանորոգութեան ամբողջ պատասխանատուութիւնը իրենց վրա վերցնել: **Եւ սա շատ լուրջ հարց է»** (ընդգծումը մերն է—Վ. Հ.)[25]:

Վկայակոչելով Բաքվի հայկական եկեղեցու նախագծման համար հայտարարված մրցույթի արդյունքները, երբ առաջին, երկրորդ և երրորդ մրցանակի արժանացած նախագծերից ոչ մեկը իրականացման հավանություն չստացավ, նա բացատրում է դա նրանով, որ նախագծերից ոչ մեկը հայկական չէր: Առաջինը վրացական էր, երկրորդը՝ ռոմանական, իսկ երրորդը ռուսական ոճի էր պատկանում[26]: Այդ պատճառով էլ դրանց փոխարեն ավելի ընդունելի համարվեց նորավարտ հայ ճարտարապետներ Աղեքսանդր Ռոտինյանի և Գաբրիել Տեր-Միքայելյանի (Տեր-Միքելով) համատեղ մշակած նախագիծը, որովհետև դրանց հեղինակները «...ոչ միայն գրքերից էին սովորել հայկական ճարտարապետութիւնը, այլ նաև ճանապարհորդել էին և առ տեղեաւ ուսումնասիրել հայոց վանքերը և դրա շնորհիւ աւելի լաւ էին ըմբռնել և արտահայտել հայկական ոճի առանձնահատկութիւնները»[27]:

Պետք է համաձայնվել, որ միանգամայն իրավացի էր Մեսրոպ վարդապետը, երբ կարևոր նշանակություն էր տալիս Մայր տաճարի վերանորոգման հետ առնչություն ունենալիք մասնագետների հայկական ճարտարապետությանը քաջածանոթ լինելու հանգամանքին:

«Էջմիածին և հայոց հնագոյն եկեղեցիները» աշխատության մեջ Մեսրոպ վարդապետն ավելի հանգամանորեն է անդրադարձել Մայր տաճարի պատմա-ճարտարապետական վերլուծությանը, առանձին ուշադրություն դարձրել տաճարի նախնա-

[22] Նույնը, էջ 408:
[23] Նույնը, էջ 409:
[24] Նույնը, էջ 410:
[25] **Մեսրոպ վարդապետ**, հիշ. աշխ., էջ 411:
[26] Նույնը, էջ 412:
[27] Նույնը, էջ 413:

կան և նոր հավելված մասերի վրա՝ հայտնելով այն ճիշտ կարծիքը, որ «Էջմիածնի Մայր գմբեթը հին լինել չէր կարող, եօթներորդ դարում Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ այդքան բարձր թմբուկով և սրածայր վեղարով գմբեթներ չէին շինում»[28]:

Այդ տեսակետի դեմ երկու անգամ[29] վճռականապես ու կրքով հանդես է եկել Բարդուղիմեոս եպիսկ. Գևորգյանը՝ ընդգծելով ապացուցել, որ Մայր տաճարի այժմյան գլխավոր գմբեթը նախնականն է, այսինքն այն կառուցվել է Է դարի առաջին կեսին, Կոմիտաս կաթողիկոսի օրոք իրականացված վերանորոգությունների ժամանակ: Կարդալով հիշյալ նամակներն ու ծանոթանալով ընդդիմախոսի փաստարկներին, դժվար է համաձայնվել նրանց հետ: Ամենից հիմնավոր փաստարկը գմբեթն է, որի համաչափությունները, ճարտարապետական ձևերն ու հարդարանքի միջոցները ոչ մի կերպ չեն տեղավորվում Է դարում և, ամենայն հավանականությամբ, վերաբերում են ուշ միջնադարին: Առավել ակնառու է դառնում այդ այն բանից հետո, երբ տարիներ անց գմբեթի թմբուկի առանձին մասերից մաքրվում է ծեփը, և տակից բացվում են անաղարտ մնացած ճարտարապետական որոշ մանրամասներ[30]:

(Շարունակելի)

[28] «Ազգագրական հանդես», XVI, էջ 179:

[29] Երկրորդը՝ «Նամակ «Արարատի» խմբագրությանը» խորագրով լույս է տեսել 1911 թ. (էջ 64—67):

[30] Տես այդ առթիվ Թիֆլիսից ժամանած մասնաժողովի կազմած արձանագրությունը, «Արարատ», 1914, էջ 220—221: